ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հայտարարություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ղեկավարությունը հայտարարում է, որ պատասխանատվություն է կրում.

1) Բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

գ. Հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե ֆինանսական հաշվետվությունները Բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,

3) Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

4) Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում հաշվապահական հաշվառումը իրականացվում է ղեկավարվելով "Հաշվապահական հաշվառման մասին" ՀՀ օրենքով, Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերով և Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ: